ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնանշման հարցման հանձնաժողովի
2019 թվականի «**մարտի**» «20» «թիվ 2» որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Գնանշման հարցման ծածկագիրը` ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57

Պատվիրատուն` Երևանի քաղաքապետարանը, որը գտնվում է ք.Երևան, Արգիշտիի 1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (______________) համակարգի միջոցով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **մշակութային միջոցառումների** մատուցման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն` ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից` նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019 **թվականի մարտի** 29-**ին ժամը** 16:15-**ն:** Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն (1000 ՀՀ դրամը, որը չի կարող գերազանցել հրավերի պատճենահանման և առաքման համար կատարվող ծախսերի չափը, վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը դիմումի հետ միասին ներկայացնելու դեպքում) այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը: (Վճարումն անհրաժեշտ է իրականացնել «Արդշինբանկ», Երևանի քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի 247010087184 հաշվեհամարին):

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի` էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի` սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (______________) համակարգի միջոցով մինչև 2019 **թվականի մարտի** 29-**ին ժամը** 16:15-**ն:** Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 2019 **թվականի մարտի** 29-**ին ժամը** 16:15-**ն:**

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Լ.Ղավալյանին:

Հեռախոս՝ 011514216:
Էլ.փոստ՝ *liana.ghavalyan@yerevan.am*
**Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան:**

*Հաստատված է*

*ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57 ծածկագրով*

*Գնանշման հարցման հանձնաժողովի*

*2019թ. « մարտի» «20»-ի թիվ «3»որոշմամբ*

*Երևանի քաղաքապետարան*

# Հ Ր Ա Վ Ե Ր

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

*Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

*Միաժամանակ - հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկով.*

*- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս անհրաժեշտ է դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ լիազորված մարմին)՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով (հեռախոս՝(+37410) 28-93-20):*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

### ՄԱՍ I.


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
8. Պայմանագրի կնքումը
9. Պայմանագրի ապահովումը
10. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
11. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


### ՄԱՍ II. ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Հավելվածներ 1-8

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Երևանի քաղաքապետարանի» (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am հասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Համակարգում մասնակցի գրանցման գործընթացը նկարագրված է www.prqcurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկում:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ *liana.ghavalyan@yerevan.am*

ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում ***Երևանի քաղաքապետարանի*** կարիքների համար՝ ***մշակութային միջոցառումների ծառայությունների*** ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են «48» չափաբաժիններում՝

| *Չափաբաժինների համարները* | ***Գնման առարկայի անվանումը*** |
|---|---|
| | ***Աջափնյակ վարչական շրջանի միջոցառումներ*** |
| | **Մշակութային միջոցառումների իրականացում** |
| 1 | «Պարի միջազգային օր» Միջոցառում |
| 2 | «Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր» միջոցառում |
| 3 | «Հայաստանի առաջին հանրապետության օր» միջոցառում |
| 4 | «Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր» միջոցառում |
| 5 | «Աջափնյակի օր» Համերգային միջոցառում |
| 6 | «Ամառային բակային ճամբար» /1 բակ/<br>հուլիս-օգոստոս 2019թ.միջոցառումներ |
| 7 | Քաղաքից դուրս գործող ճամբարներ մեկնելու և վերադարձի կազմակերպում |
| 8 | Գիտելիքի օր միջոցառում |
| 9 | «ՀՀ Անկախության օր»<br>Համերգային մշակութային միջոցառում |
| 10 | ՈՒսուցչի օր» մշակութային միջոցառում |
| 11 | «Գրադարանավարի օր» միջոցառում |
| 12 | Մշակութային կազմակերպությսւնների տարեվերջյան ամփոփ միջոցառում 12.12.2019թ. |
| | **Սոցիալական միջոցառումների իրականացում** |
| 13 | «Սուրբ հարության օր» միջոցառում |
| 14 | Հաղթանակի օրվա միջոցառում |
| 15 | «Ընտանիքի օր» մշակութային միջոցառում |
| 16 | «Երեխաների պաշտպանության օր» միջոցառում |
| 17 | էքսկուրսիաների կազմակերպում |
| 18 | «Խաղող օրհնեքի տոն» միջոցառում |
| 19 | «Տարեցների օր» միջոցառում |
| 20 | «Հաշմանդամների միջազգային օր» միջոցառում |
| 21 | Ամանորի միջոցառում |
| | ***Արաբկիր վարչական շրջանի միջոցառումներ*** |
| 22 | Արաբկիրի «Սուրբ Խաչ» եկեղեցու բակում տեղի կունենա Սբ. Զատիկին նվիրված միջոցառում |
| 23 | Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառում |
| | ***Դավթաշեն վարչական շրջանի միջոցառումներ*** |
| | **Մշակութային միջոցառումների իրականացում** |
| 24 | Զատիկ միջոցառում |
| 25 | «Մայրության և գեղեցկության օր» միջոցառում |
| 26 | «1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր» միջոցառում |
| 27 | Հաղթանակի տոնակատարությունների միջոցառում |
| 28 | Վերջին զանգի միջոցառում |
| 29 | «Երեխաների պաշտպանության միջազգային օր» միջոցառում |
| 30 | «Խաղողօրհնության օր» միջոցառում |

| | |
|---|---|
| 31 | Բակային ժամանցային միջոցառումներ |
| 32 | «Գիտելիքի օր» միջոցառում |
| 33 | «ՀՀ անկախության օր» մշակութային միջոցառում |
| 34 | «Ուսուցչի օր» միջոցառում |
| 35 | «Էրեբունի-Երևան» 2801- ամյակի տոնակատարությունի միջոցառում |
| 36 | Ամանորյա միջոցառումներ |
| | **Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն** |
| 37 | «Սուրբ Զատիկ» տոնակատարության միջոցառում |
| 38 | Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում |
| 39 | Աշխատավորների համերաշխության միջոցառում |
| 40 | Հաղթանակի եռատոնի տոնակատարությունների միջոցառում |
| 41 | «Ընտանիքի օր» միջոցառում |
| 42 | «Երեխաների պաշտպանության միջազգային օր» միջոցառում |
| 43 | Գիտելիքի օր միջոցառման շրջանակներում նվիրված միջոցառում |
| 44 | ՀՀ Անկախության օրվա միջոցառում, |
| 45 | ՈՒսուցչի օրվա տոնակատարության միջոցառում |
| 46 | Տարեցների միջազգային օրվա միջոցառում |
| 47 | «Հաշմանդամների միջազգային օր» միջոցառում |
| 48 | Սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, Հայրենական պատերազմի վետերաններին և միայնակ տարեցներին մշակութային կենտրոններ, թատրոններ այցելելու միջոցառումներ |

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող

պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

**Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում միջոցառումների ծառայությունների մատուցումը:**

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

2) <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

3) <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

4) <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

2.6 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.7 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում`

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած` սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում` հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն` մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով` հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ` տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաբաժնում` առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին` հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք

օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում ։

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար[1]:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ գնանշման հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան մինչև 2019 **թվականի մարտի** 29-**ին**, ***ժամը*** 16:15-**ն**: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

6) իր կողմից հաստատված հայտարարություն` սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

7) իր կողմից հաստատված հայտարարություն` սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

8) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

9) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

10) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

4.4 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.5 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

---

[1] *Եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է Համակարգում «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ: Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

## 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

5.1 Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

## 6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

## 7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ 2019 **թվականի մարտի** 29-**ին**, **ժամը** 16:15-**ին**:

Հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝

հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

7.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

7.3 Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման նպատակով հանձնաժողովի նախագահին ավտոմատ եղանակով ստեղծում է հայտերի գնահատման մասին արձանագրություն, որը համակարգում հաստատվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ համակարգում նշում կատարելու միջոցով:

7.4 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

7.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ **ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված օրվա փոխարժեքով** :

7.6 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.7 Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

7.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

7.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ իրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է իրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.10 Եթե սույն իրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

7.11 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից:

7.12 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն իրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները

միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gqr_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին[2].

7.14 Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է` անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

7.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Սույն հրավերի 7.14-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Սույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

7.16 Սույն հրավերի 1-ին մասի 7.14 կետով նախատեսված՝ կոմիտեից տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերն հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

7.17 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

7.18 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

---

[2] *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*

իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

7.19 Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների[3]:

Սույն հրավերի 1-ին մասի 7.16 կետով նախատեսված փաստաթուղթը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում հանձնաժողովը գնահատում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության համապատասխանությունը հրավերի պահանջներին: Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից:

Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է անբավարար, հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.18-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

7.20 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.19-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

7.21 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

7.22 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.23 Սույն հրավերի 1-ին մասի 7.22 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

7.24 Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) Համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

7.25 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

7.26 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում <u>հինգ</u> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

[3] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

8.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

8.2 Սույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

8.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

8.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

8.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

8.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

8.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 8.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

8.8 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

9.2 Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ողջ ծավալով կատարման վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունները ողջ ծավալով կատարվելուն հաջորդող տասս աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացվելու դեպքում այն ներկայացվում է հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան

9.4 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

1) մասնակիցը ընտրված է ճանաչվում մեկից ավել չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ.

2) կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չաբաժանի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:[4]

## 10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար համայնքի ավագանու որոշման հիման վրա:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

10.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 11. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

11.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

11.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ գրավոր դիմում ներկայացնելով՝ աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

11.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 7.26-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

11.5 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

---

[4] *Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

11.6 Բողոքը, այդ թվում՝ մասնակի, բավարարվելու մասին բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքներ քննող անձը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

11.7 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 11.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

11.8 Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

11.9 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

11.10 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

11.11 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

11.12 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

11.13 Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

11.14 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

11.15 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշումն կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

11.16 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

11.17 Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն իրավերի 11.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

# ՄԱՍ II
# Հ Ր Ա Հ Ա Ն Գ
# Գ Ն Ա Ն Շ Մ Ա Ն  Հ Ա Ր Ց Մ Ա Ն  Հ Ա Յ Տ Ը  Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ Ո Ւ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն իրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն իրավերի 1-ին մասի 7.18 կետով սահմանված կարգով:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «**Պիտանելիության չափորոշիչ**».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նույն կետի 8-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

2) «**Տեխնիկական չափորոշիչ**».

2.3 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի.

2.5 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.6 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).[5]

3) «**Ֆինանսական չափորոշիչ**».

[5] *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:*

2.7 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 4-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

**Հավելված** N 1
«**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ԴԻՄՈՒՄ*
## գնանշման հարցմանը մասնակցելու

________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

________________________________-ի կողմից ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57 ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

գնանշման հարցման ________________ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

________________________________–ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

________________________________ռեզիդենտ:
երկրի անվանումը

________________-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ________________
մասնակցի անվանումը հարկի վճարողի հաշվառման համարը

________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ________________
մասնակցի անվանումը էլեկտրոնային փոստի հասցեն

________________________________ ________________
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.[6]

---

[6] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված** 2
«**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին**

Սույնով _________________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ

մասնակցի անվանումը

բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ ________________________________________________________
-ն

մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ ____________________
-ին

մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) __________________________________________________
-ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ____________________________________
-ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)**:

__________________________________________ ______________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.[7]

---

*[7] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:*

**Հավելված** 2.1
«**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՏՎՅԱԼՆԵՐ
**մասնակցի իրական շահառուների մասին**

| հ/հ | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

________________________________________-ն հավաստում է, որ իրական շահառուների մասին
մասնակցի անվանումը

ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

______________________________________________ ______________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.[8]

[8] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**Հավելված** 3
«**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին**

Սույնով __________________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ

մասնակցի անվանումը

բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

________________________________________________ _______________

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[9]

---

[9] *Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված** 4
«**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ**

Ուսումնասիրելով «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/57» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, __________________________________________________-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| **Չափա-բաժինների համարներ ը** | **Ծառայության անվանումը** | **Արժեքը** (**ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը**) /**տառերով և թվերով**/ | **ԱԱՀ**** /**տառերով և թվերով**/ | **Ընդհանուր գինը** /**տառերով և թվերով**/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| ...48 | | | | |

________________________________________________ ________________

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[10]

[10] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

**Հավելված** 5

**ԵՔ-ԳՀԾՁԲ**-19/57 **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
N ________________________

ք. _______ «___» _______ 20 թ.

«_______________________________________», ի դեմս ------------------------ -ի, որը գործում է ------------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և -----------------ն, ի դեմս տնօրեն -----------------------ի, որը գործում է ------------------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ----------------- ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.prqcurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.prqcurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ______ (_____տառերով_________________________________________ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[11]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

---

[11] *Եթե Կապարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ** (**ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ**)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[12]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[13]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման

---

[12] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[13] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ------------------------------------------- | ------------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«  » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աջափնյակ վարչական շջանի մշակութային միջոցառումների իրականացում<br><br>Ծառայություն | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԳՄԱ կոդ (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 79951110/326 | **Պարի միջազգային օր** 29.04.2019**թ**.<br>Պարային միջոցառում/Արմենիա ԲԿ-ին հարող պուրակում/<br>վարչական շրջանի պարախմբերի մասնակցությամբ<br>Հանդիսավար:<br>Ձայնային տեխնիկա 10 ԿՎ հզորությամբ: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 2 | 79951110/327 | **Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր**<br>09.05.2019**թ**.<br>Թարմ ծաղիկներից պատրաստված ծաղկեպսակ, թարմ մեխակներ /50 հատ/<br>զոհվածների հիշակակը հավերժացնող հուշարձանին խոնարհելու համար: 20 տեղանոց տրանսպորտային միջոց վետերանների այցը ,,Հաղթանակ,, զբոսայգի կազմակերպելու համար: Հյուրասիրություն վետերանների համար /30 հոգի/՝ ֆուրշետ ,( կոնյակ ,,Արարատ,, գինի ,,Արենի,, օղի ,,Ֆինլանդիա կամ համարժեքը)<br>,,Գրանդ քենդի,,-ի շոկոլադ, խմորեղեն, բնական հյութ ,,Նոյյան,, և մրգերի տեսականի:<br>Այց Շուշի՝ 8-10 անձ:<br>Տրանսպորտ՝ ,,Մերսեդես Սպրինտեր,, , հյուրանոց՝ 1 օր, 10 անձի համար, սնունդով:<br>Նվեր՝ նոթբուկ 2 հատ<br>Դյուրակիր համակարգիչ<br>Մոդել ,,Lenivq IdeaPad,, 330S-15IKB կամ համարժեք, պրոցեսոր Cqre i5 8250U 8X3.4GHz, էկրան 15.6 1366 x 768 HD, տեսաքարտ Intel UHD 620 Graphics, օպերատիվ հիշողություն 4Gb DDR4, ներքին հիշողություն 1Tb HDD + 16 Gb Գptane, սկավառակակիր, ձայն Built in Stereq, ցանցային կապ Wi-Fi, Bluetqqth, մուտք – ելք HDMI, USB 3.0 x 2, Type –C, SD, տեսախցիկ 720 HD, քաշ 1500 գր., օպերացիոն համակարգ Windqws 10, երաշխիք 12 ամիս: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 3 | 79951110/328 | **Հայաստանի առաջին հանրապետության օր**<br>28.05.2019**թ**.<br>Համերգային –մշակութային միջոցառում՝ հրավիրված 5 ազգագրական երգիչ-երգչուհիների, 4 պարային խմբերի և հանդիսավարի մասնակցությամբ:<br>., Ֆերմա, լույսեր:<br>Ձայնային տեխնիկա 15 ԿՎ հզորությամբ: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 79951110/329 | **Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր** 01.06.2019**թ**. Համերգային միջոցառում հրավիրված ծաղրածու հանդիսավարի, մանկական երգիչների ու համույթների, ձեռնածուի, կենդանիներով աճպարարների, մուլտֆիլմերի 7 հերոսների մասնակցությամբ: ,,Աջափնյակ,, գեղագիտական կենտրոնի, Ա.Գաբրիելյանի անվան արվեստի դպրոցի, Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործական կենտրոնի սաների նկարչական, բատիկայի, խեցեգործական աշխատանքների ցուցահանդես: 40 տուփ գունավոր կավիճներ: Նվերների բաշխում՝ 500 հատ քաղցրավենիքի տուփեր: Մեկ տուփի պարունակությունը.. 2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե սալիկ՝ 1.15 գր.. 1 տուփ կարամել պոմադային և սառնաշաքարային.Կարամել թեյի, սրճային, կաթնային, շոկոլադե, կակաո, կապուչինո, պոմադային- նարինջ, ելակ, լիմոն, մալինա, բալ, խնձոր. 1 տուփ շոկոլադե-կաթնային քառակուսի վաֆլի-կաթնային և կակաո փոշու հավելումներով. 4 հատ ուղղանկյունաձև մրգային, մրգանուշ – կիտրոնի, դյուշեսի, նարնջի, բալի ելակի համերով. 2 հատ կոնաձև շոկոլադե կոնֆետ կրեմային միջուկով.2 հատ ուղղանկյունաձև շոկոլադե կոնֆետ մրգային միջուկով –բալ, կիվի, անանաս, նարինջ, կիտրոն. 3հատ ուղղանկյունաձև կաթնային սուֆլե-խտացրած կաթի հավելումով և մրգային կտորներով, պատված կաթնային շոկոլադով. 2 հատ կլոր շոկոլադապատ –հարած սպիտակուցային մասսա խնձորի պյուրեի և վանիլինի հավելումներով. 2 հատ ուղղանկյունաձև վաֆլի- կաթնային միջուկով և իրիսի համով հատային փաթեթավորված վաֆլի. 3 հատ ուղղանկյունաձև կոնֆետ-շոկոլադապատ, գետնանուշի հավելումով: Տարածքի ձևավորում գունավոր փուչիկներով:.,Ֆերմա, լույսեր:Ձայնային տեխնիկա 10 ԿՎ հզորությամբ: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 5 | 79951110/330 | **Ամառային բակային ճամբար** /1 բակ/<br>հուլիս-օգոստոս 2019թ.<br>Միջոցառումների կազմակերպում՝ մուլտֆիլմերի 3 հերոս, ծաղրածու-խաղավար, նվերներ՝ սպորտային գույք՝ վոլեյբոլի 5 գնդակ, 10 ցատկապարան, 10 օղակ:<br>Այցելություն կենդանաբանական այգի՝ տրանսպորտային միջոց և տոմսեր՝ 80 երեխայի համար:<br>Առանց կրեմի թխվածքաբլիթ կամ բուլկի հայկական արտադրության:<br>Ձայնային տեխնիկա 3 ԿՎ հզորությամբ | | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 6 | 79951110/331 | **Ամառային բակային ճամբար** /1 բակ/հուլիս-օգոստոս 2019թ.Միջոցառումների կազմակերպում՝ մուլտֆիլմերի 3 հերոս, ծաղրածու-խաղավար, նվերներ՝ սպորտային գույք՝ վոլեյբոլի 5 գնդակ, 10 ցատկապարան, 10 օղակ:Այցելություն կենդանաբանական այգի՝ տրանսպորտային միջոց և տոմսեր՝ 80 երեխայի համար:Առանց կրեմի թխվածքաբլիթ կամ բուլկի ,,Դարոինկ,,-ի արտադրության:Ձայնային տեխնիկա 3 ԿՎ հզորությամբ:. | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակմինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |
| 7 | 79951110/332 | Քաղաքից դուրս գործող ճամբարներ մեկնելու և վերադարձի կազմակերպում /Երևան-Հանքավան, մի կողմը՝70կմ/<br>հուլիս-օգոստոս 2019թ.<br>,,Մերսեդես,, կամ համարժեք մակնիշի 50 տեղանոց ավտոբուս՝ 4 հերթափոխով երեխաների մեկնումը և վերադարձը կազմակերպելու համար:<br>Սպորտային գույքի նվիրատվություն՝ վոլեյբոլի գնդակ -15 հատ, ցատկապարան – 20 հատ, օղակ – 20 հատ:<br>200 գր.-ոց 240 շիշ ջուր առանց գազի: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակ մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 79951110/333 | **Գիտելիքի օր** 01.09.2019**թ**.<br>Այցելություն վարչական շրջանի կրթական, նախակրթական, մշակութային և մարզական թվով 47 կազմակերպություններ: Կազմակերպություններին նվիրելու համար ծաղկեփնջեր 47 հատ՝ վարդերից և հերբերաներից ձևավորված:<br>47 շիշ տեղական արտադրության, կիսաչոր շամպայն և ,,Մերսի,,կամ համարժեքը կոնֆետների տուփեր /մեծ/: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակ մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |
| 9 | 79951110/334 | **ՀՀ Անկախության օր** 21.09.2019**թ**.<br>Համերգային–մշակութային<br>միջոցառում հանրապետությունում ճանաչված, հրավիրված 6 երգիչ-երգչուհիների 3 պարային խմբերի և հանդիսավարի մասնակցությամբ:<br>Տարածքի տոնական ձևավորում եռագույն դրոշներով և փուչիկներով:<br>Ֆերմա,լույսեր:<br>Ձայնային տեխնիկա 15 ԿՎ հզորությամբ: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակ մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |
| 10 | 79951110/335 | **ՈՒսուցչի օր** 05.10.2019**թ**.<br>Շնորհակալագրերի հանձնում լավագույն ուսուցիչներին, դաստիարակներին և մշակութային կազմակերպությունների դասատուներին: Ծաղկեփնջեր 50 հատ, 46 հատ գունավոր, Երևանի զինանշանով տպագրված A-4 ֆորմատի շնորհակալագրեր:<br>Հյուրասիրություն՝ ֆուրշետ , կոնյակ ,,Արարատ,կամ համ համարժեք, , գինի ,,Արենի,, կամ համարժեք, շոկոլադ, խմորեղեն, բնական հյութ և մրգերի տեսականի: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I V եռամսյակ մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| 11 | 79951110/336 | **Գրադարանավարի օր**<br>07.10.2019թ.<br>Շնորհակալագրերի հանձնում լավագույն գրադարանավարներին, գունավոր, Երևանի զինանշանով տպագրված, A-4 ֆորմատի՝ 4 հատ: Ծաղկեփնջեր – 4 հատ:<br>Գրականության նվիրատվություն գրադարանին և մասնաճյուղերին: | դրամ | | | 1 | Աջափնյակվ արչական շրջան | I V եռամսյակ մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| 12 | 79951110/337 | **Մշակութային կազմակերպությունների տարեվերջյան ամփոփ միջոցառում**<br>12.12.2019**թ**.<br>Համերգային–մշակութային միջոցառում Ա.Բաբաջանյան համերգասրահում:<br>Համերգասրահի և տեխնիկայի վարձակալում, 20 հատ թարմ ծաղկեփնջեր, շնորհակալագրեր 20 հատ, տպագրված, A-4 ֆորմատի: 20 հատ տեղական արտադրության ձեռքի ժամացույցներ՝ հայկական խորհրդանիշերով: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I V եռամսյակ մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| | | **Աջափնյակ վարչական շջանի սոցիալական միջոցառումների իրականացում** | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 79951110/340 | êáõñµ Ð³ñáõÃÛ³Ý ïáÝ<br>23.04.2019թ.<br>êáóÇ³É³ å»ë ³Ý³å³Ñáí Ùáï 110 ß³Ñ³éáõÝ»ñÇ Ñ³Ù³ñ ÑÛáõñ³ëÇñáõÃÛ³Ý<br>Ï³½Ù³Ï»ñåáõÙ í³ñã³Ï³Ý ßñç³ÝáõÙ qáñÍáÕ µ³ñ»qáñÍ³Ï³Ý ×³ß³ñ³ÝáõÙ:<br>Ö³ß³ëñ³ÑÁ å»ïù¿½³ñ¹³ñíÇ êáõñµ Ð³ñáõÃÛ³Ý ïáÝÇÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý: êñ³ÑÇ<br>ïáÝ³Ï³Ý Ó¨³íáñÙ³Ý Ñ³Ù³ñ û ï³qáñÍíáõÙ »Ý ïÝï»ë³Ï³Ý ³åñ³ÝùÝ»ñ, ÷áõãÇÏÝ»ñ,<br>Í³ÕÏ³ÛÇÝ ÏáÙåá½ÇóÇ³Ý»ñ, qáõÝ³íáñ Å³å³í»ÝÝ»ñ, ïáÝ³Ï³Ý ÙáÙ»ñ: îáÝ³Ï³Ý<br>×³ßÏ»ñáõÛÃÇ Å³Ù³Ý³Ï ûq ï³qáñÍíáõÙ »Ý Ù»Ï³Ýq³ÙÛ³ ûq ï³qáñÍÙ³Ý ï³ñµ»ñ<br>ã³÷ë»ñÇ ³÷ë»Ý»ñ, µ³Å³ÏÝ»ñ ¨ åáÉÇ¿ÃÇÉ»Ý³ÛÇÝ ïáåñ³ÏÝ»ñ: Ö³ßÏ»ñáõÛÃÇÝ Ý»ñÏ³ ¿<br>ÉÇÝáõÙ »Ï»Õ»óáõó Ññ³íÇñí³Í ù³Ñ³Ý³Ý, áñÁ ûñÑÝáõÙ ¿ ïáÝ³Ï³Ý ë»Õ³ÝÝ»ñÁ:<br>Ø³ïáõóíáõÙ ¿ ùÛáõýÃ³`Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 200qñ. Ï³ñ³qáí` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 50qñ. ,<br>µñÝÓáí ã³ÙÇãáí ÷É³í Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 300qñ.պատրաստի վիճակում ê»Õ³ÝÝ»ñÁ<br>Ó¨³íáñíáõÙ »Ý 2 qáõÛÝÇ ë÷éáóÝ»ñáí, ïáÝ³Ï³Ý ³ñÑ»ëï³Ï³Ý Í³ÕÇÏÝ»ñáí<br>Ó¨³íáñí³Í Ï³ñÙÇñ qáõÛÝÇ ÙáÙ»ñáí, ³×»óñ³Í óáñ»ÝÇ Ï³Ý³ã ÍÇÉ»ñáí, ¼³ïÇÏÁ<br>ËáñÑñ¹³ÝßáÕ Ï³ñÙÇñ Ý»ñÏ³Í Óí»ñáí, Ûáõñù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ` 3 Ñ³ï Óáõ:<br>ê»Õ³ÝÝ»ñÇÝ ¹ñíáõÙ »Ý q»Õ»óÇÏ Ó¨³íáñí³Í qÇÝáõ ßß»ñ /տեղական արտադրության<br>դառը/ Ûáõñ³ù³ÝãÛáõñ 4ÑáqáõÝ 1ßÇß` 750ÙÉ, / å³ÝÇñ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 50qñ., Ï³Ý³ã»Õ»Ý<br>/Ã³ñËáõÝ, Ñ³Ù»Ù/, Ùñq»Õ»Ý /ËÝÓáñ, µ³Ý³Ý, Ý³ñÇÝç/ Ûáõñ³ù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ 1-<br>³Ï³Ý ÙÇñq ËÙáñ»Õ»Ý /2 ï»ë³ÏÇ/ ¨ q³Ã³ Ûáõñù³ÝãÛáõñÇó 100-³Ï³Ý qñ³Ù , ßáÏáÉ³¹»<br>ÏáÝý»ïÝ»ñ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 200qñ., Ñ³Ýù³ÛÇÝ çáõñ Ûáõñ³ù³ÝãÛáõñ 4ÑáqáõÝ 1ßÇß 1É.<br>ï³ñáÕáõÃÛ³Ùµ, , q³½³íáñí³Í ÉÇÙáÝ³¹ Ûáõñ³ù³ÝãÛáõñ 4ÑáqáõÝ 1ßÇß 1É.<br>ï³ñáÕáõÃÛ³Ùµ ¨ µÝ³Ï³Ý ÑÛáõÃ»ñ 200ÙÉ/եվրոպական կամ ռուսական արտադրության/<br>. ï³ñáÕáõÃÛ³Ùµ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1 ïáõ÷, Ñ³ó Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï µáùáÝÇÏ, 1Ñ³ï<br>É³í³ß Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï: àõÝ»Ýù Ý³¨ ïÝ³ÛÇÝ ËÝ³ÙùÇ ß³Ñ³éáõÝ»ñ, áñáÝó<br>Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í ëÝáõÝ¹Á ï³ñíáõÙ ¿ ïáõն:Շահող կազմակերպության կողմից<br>տրամադրված տրանսպորտային միջոցով /մարդատար ամտոմեքենա 4-5 տեղանոց/<br>ØÇçáó³éáõÙÁ áõÕ»ÏóíáõÙ ¿ 30-40 ñáå» ï¨áÕáõÃÛ³Ùµ Ùß³ÏáõÃ³ÛÇÝ Ù³ëáí, áñÇ<br>ÁÝÃ³óùáõÙ ÉÇÝáõÙ ¿ »ñqÇ Ï»Ý¹³ÝÇ Ï³ï³ñáõÙ, ÇÝãå»ë Ý³¨ q»Õ³ñí»ëï³Ï³Ý Ù³ë:<br>ÎÇñ³éíáõÙ ¿ Ó³ÛÝ³ÛÇÝ ï»ËÝÇÏ³: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 14 | 79951110/341 | Ð³ÕÃ³Ý³ÏÇ ûñ 09.05.2019թ.<br>հաղթանակի օրվա կապակցությամբ իրականացնել í³ñã³Ï³Ý ßñç³ÝáõÙ<br>µÝ³ÏíáÕ Ð³Ûñ»Ý³Ï³Ý Ù»Í å³ï»ñ³½ÙÇ Ù³ëÝ³ÏÇցների բնակարաններ,<br>թվով՝ 12 մասնակիցների այցելություն: Շահող կազմակերպության կողմից<br>տրամադրված տրանսպորտի միջոցով՝մարդատար ավտոմեքենաէվարորդով<br>4-5 տեղանոց և բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ: այցելության<br>ընթացքում թվով 12 մասնակիցներին հատկացնել յուրաքանչյուրին 30.000<br>¹ñ³Ù/գումարը դրված լինի ծրարի մեջ, ծաղկեփունջ, ïáñÃ, ß³Ùå³ÛÝ:<br>Ծաղկեփունջ 12 հատ `- վարդեր 7հատ, հոլանդական տեսակի, թարմ<br>վիճակում, ցողունի երկարությունը 65-70սմ և ավելի, փարթամ գլխիկներով,<br>գլխիկի տրամագիծը 5-7սմ : Վարդերի փունջը /7հատ/ տոնական զեղեցիկ<br>փաթեթավորված:<br>Շամպայն 12հատ հայկական արտադրության 0,75լ տարողությամբ<br>կիսաչոր:<br>Տորթ 12հատ մրգային 10ից-11սմ բարձրության 28ից-30սմ տրամագծով<br>պատրաստված բարձր տեսակի ալյուրից, ձու, շաքարավազ, տորթի<br>բաղադրության մեջ լինի մրգեր՝ ելակ, բանան, նարինջ և այլն, կրեմը<br>սերուցքային: Անվտանգությունը ՝ N 2-III-4.9-01-2010 հիգենիկ | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նորմատիվների, մակնշումը՝ «սննդամթերքի անվտանգության մասին » ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | | | | | |
| 15 | 79951110/341 | Ընտանիքի օր 15.05.2019թ.Վարչական շրջանի սոցիալապես անապահով բազմազավակ և բազմանդամ ընտանիքների նպատակային կարիքների համար կենցաղային տեխնիկայի ձեռքբերում: Այցելություն թվով 5 բազմանդամ ընտանիքների՝ տորթ, ծաղիկեփուրջ անհրաժեշտ կենցաղային տեխնիկա՝1հատ լվացքի մեքենա, 1հատ սառնարան, 2հատ գազօջախ, 1հատ հեռուստացույց: Շահող կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով /մարդատար և բեռնատար մեքենա /վարորդով այցելություն և կենցաղային տեխնիկայի տեղափոխում 5 բազմանդամ ընտանիքներին:Լվացքի մեքենա 1հատ -բեռնման նվազագույն չափը 6կգ, քանման առավելագույն արագությունը 1000 պտույտ լվացքի ռեժիմները նվազագույնը 7ծրագիր կառավարման տեսակը էլեկտրոնային գույնը սպիտակ չափսը 85 *60* 55սմ էներգախնայողության դասը՝ A** արտադրությունը Եվրոպական կորեական կամ ճապոնական երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է 24ամիս երաշխիքով : Սառնարան 1հատ - սառնարանի ծավալը 230լ սառցախցիկի ծավալը նվազագույնը 90լ սառցախցիկը ներքևում սառնարանի համակարգը Nq frrqst էներգախնայողության դասը՝ A** աղմուկի մակարդակը առավելագույնը 45DB չափերը նվազագույնը 180*60*66սմ գույնը սպիտակ արտադրությունը Եվրոպական կորեական կամ ճապոնական երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է 24ամիս երաշխիքով : Գազօջախ 2հատ եփման մակերեսի տեսակը համակցված ջեռոցի տեսակը էլեկտրական այրիչների քանակը 4 գազայրիչների քանակը 3 էլեկտրականը 1 աշխատանքյին ռեժիմների քանակը նվազագույնը 4 էլեկտրական այրման տեսակը ավտոմատ գույնը սպիտակ չափսը 85*60*60սմ էներգախնայողության նվազագույն դասը՝ A* արտադրությունը Եվրոպական երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է 24ամիս երաշխիքով : Հեռուստացույց 1հատ - Անկյունագիծը 40դույմ և ավելի թվային հեռուստատեսության ընդունիչ DVB-+/T2/C/S2 հեռուստացույցի էկրանը LED կամ դրան համարժեք էներգախնայողության դասը՝ A* արտադրությունը Եվրոպական երաշխիքի կտրոնի առկայությունը պարտադիր է 24ամիս երաշխիքով :Ծաղկեփունջ 5 հատ `- վարդեր 7հատ, հոլանդական տեսակի, թարմ վիճակում, ցողունի երկարությունը 65-70սմ և ավելի, փարթամ գլխիկներով, գլխիկի տրամագիծը 5-7սմ : Վարդերի փունջը /7հատ/ տոնական գեղեցիկ փաթեթավորված Տորթ 5հատ մրգային 10ից-11սմ բարձրության 28ից-30սմ տրամագծով պատրաստված բարձր տեսակի ալյուրից, ձու, շաքարավազ,տորթի բաղադրության մեջ լինի մրգեր՝ ելակ, բանան, նարինջ և այլն, կրեմը սերուցքային: Անվտանգությունը ՝ N2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, մակնշումը՝ «սննդամթերքի անվտանգության մասին » ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 79951110/342 | **Երեխաների պաշտպանության օր** 01.06.2019**թ**.<br>այցելություն վարչական շրջանի սոցիալապես անապահով 40 ընտանիքների երեխաներին /40երեխա / : Շահող կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտի միջոցով՝մարդատար ավտոմեքենա՝վարորդով 4-5 տեղանոց և բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ: Այցելության ընթացքում թվով 40 երեխաներին հատկացնել յուրաքանչյուրին, ï áñÃ, հյութեր և մարզակոշիկներ:<br>Տորթ 40 հատ մրգային 10ից-11սմ բարձրության 28ից-30սմ տրամագծով պատրաստված բարձր տեսակի ալյուրից, ձու, շաքարավազ,տորթի բաղադրության մեջ լինի մրգեր՝ ելակ, բանան, նարինջ և այլն, կրեմը սերուցքային: Անվտանգությունը ՝N 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, մակնշումը՝ «սննդամթերքի անվտանգության մասին » ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի հյութեր 80 տուփ, յուրաքանչյուրին 2տուփ ռուսական կամ եվրոպական արտադրության բնական 1լիտր տարողությամբ : Անվտանգությունը ՝N 2-III-4.9-01-2010 հիգենիկ նորմատիվների, մակնշումը՝ «սննդամթերքի անվտանգության մասին » ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: մարզական կոշիկներ /բոթասներ/ սուպինատրով նախատեսված վազքի և խաղերի համար /ամառային /պատրաստված լինի բարձրորակ հումքից առանց քիմիական հոտերի /վառվռուն գույներով/ արտադրությունը եվրոպական հայրենական կամ ռուսական: չափսերը-10զույգ եվրոպական 33 չափս, 10զույգ եվրոպական 34չափս, 10զույգ եվրոպական 35չափս 10զույգ .եվրոպական 36չափս | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I եռամսյակ մինչև 2019թ. հունիսի 30-ը ներառյալ |
| 17 | 79951110/343 | **Էքսկուրսիաների կազմակերպում** 01.07.2019**թ**.-31.08.2019**թ**.<br>Նախատեսվում է վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների համար էքսկուրսիաների կազմակերպում դեպի Սևանա լիճ: Էքսկուրսիայի մասնակիցներին պարտադիր պետք է ուղեկցի շահող կազմակերպության կողմից տրամադրված բժիշկ:՝ մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող և բաժնի աշխատակիցները : Նախատեսվում է իրականացնել 2 էքսկուրսիա հուլիս և օգոստոս ամիսներին, օրերը նախապես համաձայնեցնելով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: Յուրաքանչյուր Էքսկուրսիայի ժամանակ ավտոբուսը պետք է լինի Սևանա լճում առավոտյան ժամը 11ին և հետ վերադարձը ժամը 18.00ին: Էքսկուրսիան կազմակերպել Սևանա լճի ափամերձ հանգստյան գոտում , որը ունենա տաղավարներ նախատեսված 30ից 35 մասնակիցների համար հանգիստը հարմարավետ անցկացնելու և լողալու համար նախատեսված համապատասխան ափ: Յուրաքանչյուր էքսկուրսիայի մասնակիցների թիվը մոտ 30-35 մասնակից: տրանսպորտային միջոցը 40ից 45 տեղանոց բարձրակարգ ավտոբուս՝վարորդով: Մասնակիցներին պետք է ապահովվել ՝ սնունդով, ջրեղենով և քաղցրավենիքով /առանց կրեմի/:<br>Գրիլ հավ 20հատ պատրաստի վիճակու մընդհանուր քաշը կազմի 25կգ, լավաշ 20կգ, 40հատ քաբաբ պատրաստված տավարի մսից պատրաստի վիճակում նվազագույնը 200գր, յուրաքանչյուրը փաթաթված լավաշի մեջ դրված մեկանգամյա օգտագործման տոպրակի մեջ, 60հատ խմելու ջուր | | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակ մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | յուրաքանչյուրը 0,5լ հայկական արտադրության:<br>1լ բնական հյութ ռուսական կամ եվրոպական արտադրության 40տուփ,<br>120հատ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված բաժակներ<br>բարջարեղեն -պոմիդոր 10կգ, վարունգ 10կգ հայկական :<br>Պանիր 3կգ բարձրակարգ հայկական արտադրության<br>քաղցրավենիք - հայկական արտադրության առանց կրեմի շոկոլադապատ<br>վաֆլիներ -7կգ, պեչենիներ տարբեր տեսակի 7կգ | | | | | | | |
| 18 | 79951110/344 | Ê³ÕáÕ ûñÑÝ»ùÇ ïáÝ 20.08.2019թ. ÜáóÇ³É³ å»ë ³Ý³å³Ñáí Ùáï<br>110ß³Ñ³éáõÝ»ñÇ Ñ³Ù³ñ Ñ½áõñ³ëÇñáõÃ½³Ý Ï³½Ù³Ï»ñå»áõÙ í³ñã³Ï³Ý<br>ßñç³ÝáõÙ qáñÍáÕ µ³ñ»qáñÍ³Ï³Ý ×³ß³ñ³ÝáõÙ: Ö³ß³ëñ³ÑÁ å»ïù ¿<br>½³ñ¹³ñíÇ Ê³ÕáÕ ûñÑÝ»ùÇ ïáÝÇÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý: êñ³ÑÇ ïáÝ³Ï³Ý<br>Ó¨³íáñÙ³Ý Ñ³Ù³ñ ûq ï³qáñÍíáõÙ »Ý ïÝï»ë³Ï³Ý ³åñ³ÝùÝ»ñ, ÷áõãÇÏÝ»ñ,<br>Ùñq³½ÇÝ ¨ Í³ÕÏ³½ÇÝ ÏáÙåá½ÇóÇ³Ý»ñ, qáõÝ³íáñ Å³å³í»ÝÝ»ñ, ïáÝ³Ï³Ý<br>ÙáÙ»ñ: îáÝ³Ï³Ý ×³ßÏ»ñáõ½ÃÇ Å³Ù³Ý³Ï ûq ï³qáñÍíáõÙ »Ý Ù»Ï³Ýq³Ù½³<br>ûq ï³qáñÍÙ³Ý ï³ñµ»ñ ã³÷ë»ñÇ ³÷ë»Ý»ñ, µ³Å³ÏÝ»ñ ¨ ëÝÝ¹Ç Ñ³Ù³ñ<br>Ý³Ë³ï»ëí³Í Ù»Ï³Ýq³Ù½³ ûq ï³qáñÍÙ³Ý åáÉÇ¿ÃÇÉ»Ý³½ÇÝ ïáåñ³ÏÝ»ñ:<br>Ø³ïáõóíáõÙ ¿ ï³í³ñÇ ÙëÇó Ë³ßÉ³Ù³ ½áõñ³ù³Ýã½áõñÇÝ` 200qñ. /Ù³ï³Õ/,<br>ù½áõýÃ³` ½áõñ³ù³Ýã½áõñÇÝ` 200qñ. Ï³ñ³qáí ½áõñ³ù³Ýã½áõñÇÝ` 50qñ,<br>ëáË»é³Íáí `/5Ïq ëáË, 5É Ó»Ã/, å³ïñ³ëïí³Í Ñ³×³ñÇ ÷É³í,<br>½áõñ³ù³Ýã½áõñÇÝ 200qñ պատրաստի վիճակում.: Ö³ßÏ»ñáõ½ÃÇÝ Ý»ñÏ³ ¿<br>ÉÇÝáõÙ »Ï»Õ»óáõó Ññ³íÇñí³Í ù³Ñ³Ý³Ý, áñÁ ûñÑÝáõÙ ¿ Ù³ï³ÕÁ:<br>ê»Õ³ÝÝ»ñÁ Ó¨³íáñíáõÙ »Ý 2 qáõ½ÝÇ ë÷éáóÝ»ñáí, ïáÝ³Ï³Ý ½³ñ¹³ñí³Í<br>ÙáÙ»ñáí /20հատ գունավոր մոմեր 17հց -20սմ երկարությամբ: ê»Õ³ÝÝ»ñÇÝ<br>¹ñíáõÙ »Ý Å³å³í»ÝÝ»ñáí q»Õ»óÇÏ Ó¨³íáñí³Í qÇÝáõ ßß»ñ` ½áõñ³ù³Ýã½áõñ<br>4ÑáqáõÝ 1ßÇß 750qñ./դարը /տեղական արտադրության /, å³ÝÇñ<br>½áõñ³ù³Ýã½áõñÇÝ 50qñ. Ùñq»Õ»Ý` Ù³ëÝ³íáñ³å»ë ïáÝÇÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý<br>ë»Õ³ÝÝ»ñÇÝ q»ñÇßËáÕÁ Ñ³Ý¹Çë³ÝáõÙ ¿ Ï³ñÙÇñ ùÇßÙÇß ï»ë³ÏÇ Ë³ÕáÕÁ,<br>¹»ÕÓ, ËÝÓáñ, ½áõñ³ù³Ýã½áõñ ß³Ñ³éáõÇÝ ³Ù»Ý Ùñq Çó 100-³Ï³Ý qñ³Ù,<br>µ³Ýç³ñ»Õ»Ý` í³ñáõÝq, åáÙÇ¹áñ, ½áõñ³ù³Ýã½áõñÇÝ 1Ñ³ï ÙÇçÇÝ ã³÷ëÇ ,<br>ËÙáñ»Õ»Ý /2ï»ë³ÏÇ/, Ý³¨q³Ã³ ½áõñ³ù³Ýã½áõñÇó 100-³Ï³Ý qñ, ßáÏáÉ³¹»<br>ÏáÝý»ïÝ»ñ ½áõñ³ù³Ýã½áõñ ß³Ñ³éáõÇÝ 200qñ, Ñ³Ýù³½ÇÝ çáõñ 4ÑáqáõÝ 1ßÇß<br>1É ï³ñáÕáõÃ½³Ùµ, q³½³íáñí³Í ÉÇÙáÝ³¹ 4ÑáqáõÝ 1ßÇß 1É ï³ñáÕáõÃ½³Ùµ ¨<br>µÝ³Ï³Ý Ñ½áõÃ»ñ ½áõñ³ù³Ýã½áõñÇÝ 1ïáõ÷ 200ÙÉ. ï³ñáÕáõÃ½³Ùµ,<br>½áõñ³ù³Ýã½áõñÇÝ 1Ñ³ï µáùáÝÇÏ Ñ³ó, 1É³í³ß: àõÝ»Ýù Ý³¨ ïÝ³½ÇÝ ËÝ³ÙùÇ<br>ß³Ñ³éáõÝ»ñ, áñáÝó Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í ëÝáõÝ¹Á ï³ñíáõÙ ¿ ïáõÝ: Տահող<br>կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով<br>/մարդատար ավտոմեքենա`վարորդով 4-5 տեղանոց/ ØÇçáó³éáõÙÁ<br>áõÕ»Ïóíáõ٠¿ 30-40 ñáå» ï¨áÕáõÃ½³Ùµ Ùß³ÏáõÃ³½ÇÝ Ù³ëáí, áñÇ ÁÝÃ³óùáõÙ<br>ÉÇÝáõÙ ¿ »ñqÇ Ï»Ý¹³ÝÇ Ï³ï³ñáõÙ, ÇÝã å»ë Ý³¨ q»Õ³ñí»ëï³Ï³ÝÙ³ë:<br>ÎÇñ³éíáõÙ ¿ Ó³½Ý³½ÇÝ ï»ËÝÇÏ³: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I I I եռամսյակ մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 79951110/345 | **Տարեցների օր** 01.10.2019**թ**.<br>êáóÇ³É³å»ë ³Ý³å³Ñáí Ùáï 110ß³Ñ³éáõÝ»ñÇ Ñ³Ù³ñ Ñ̂áõñ³ëÇñáõÃÛ³Ý<br>Ï³½Ù³Ï»ñåáõÙ í³ñã³Ï³Ý ßñç³ÝáõÙ qáñÍáÕ µ³ñ»qáñÍ³Ï³Ý ×³ß³ñ³ÝáõÙ:<br>Ö³ß³ëñ³ÑÁ å»ïù¿½³ñ¹³ñíÇ ïáÝ³Ï³Ýáñ»Ý: êñ³ÑÇ ïáÝ³Ï³Ý<br>Ó¨³íáñÙ³Ý Ñ³Ù³ñ ûq ï³qáñÍíáõÙ »Ý ïÝï»ë³Ï³Ý ³åñ³ÝùÝ»ñ, ÷áõãÇÏÝ»ñ,<br>Í³ÕÏ³ÛÇÝ ÏáÙåá½ÇóÇ³Ý»ñ, qáõÝ³íáñ Å³å³í»ÝÝ»ñ, ïáÝ³Ï³Ý<br>ÙáÙ»ñ/20հատ գունավոր մոմ 17ից-20սմ: îáÝ³Ï³Ý×³ßÏ»ñáõÛÃÇ Å³Ù³Ý³Ï<br>ûq ï³qáñÍíáõÙ »Ý Ù»Ï³Ýq³ÙÛ³ ûq ï³qáñÍÙ³Ý ï³ñµ»ñ ã³÷ë»ñÇ ³÷ë»Ý»ñ,<br>µ³Å³ÏÝ»ñ ¨ ëÝÝ¹Ç Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í Ù»Ï³Ýq³ÙÛ³ ûq ï³qáñÍÙ³Ý<br>åáÉÇ¿ÃÇÉ»Ý³ÛÇÝ ïáåñ³ÏÝ»ñ: Ø³ïáõóíáõÙ ¿ ï³í³ñÇ ÙëÇó Ë³ßÉ³Ù³<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ` 200qñ. /Ù³ï³Õ/, ùÛáõýÃ³` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ` 200qñ.<br>Ï³ñ³qáí Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ` 50qñ, ëáË»é³Íáí `/5Ïq ëáË, 5É Ó»Ã/,<br>å³ïñ³ëïí³Í Ñ³×³ñÇ ÷É³í, Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 300qñպատրաստի<br>վիճակում/.: Ö³ßÏ»ñáõÛÃÇÝ Ý»ñÏ³ ¿ÉÇÝáõÙ »Ï»Õ»óáõó Ññ³íÇñí³Í ù³Ñ³Ý³Ý,<br>áñÁ ûñÑÝáõÙ ¿ Ù³ï³ÕÁ: ê»Õ³ÝÝ»ñÁ Ó¨³íáñíáõÙ »Ý 2 qáõÛÝÇ ë÷éáóÝ»ñáí ¨<br>Í³ÕÏ³ÛÇÝ ÏáÙåá½ÇóÇ³Ý»ñáí: ê»Õ³ÝÝ»ñÇÝ ¹ñíáõÙ »Ý Å³å³í»ÝÝ»ñáí<br>q»Õ»óÇÏ Ó¨³íáñí³Í qÇÝáõ ßß»ñ` Ûáõñ³ù³ÝãÛáõñ 4ÑnqáõÝ 1ßÇß 750qñ<br>/ÏÇë³ù³Õóñ տեղական արտադրության/ å³ÝÇñ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 50qñ.<br>,Ùñq»Õ»Ý /Ë³ÕáÕ, ¹»ÕÓ, ë³Éáñ, ï³ÝÓ, ËÝÓáñ/` Ûáõñ³ù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ<br>³Ù»Ý ÙñqÇó 100-³Ï³Ý qñ³Ù, µ³Ýç³ñ»Õ»Ý` í³ñáõÝq, åáÙÇ¹áñ,<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï ÙÇçÇÝ ã³÷ëÇ, ËÙáñ»Õ»Ý /2ï»ë³ÏÇ, ³é³Ýó Ïñ»ÙÇ/,<br>Ý³¨q³Ã³, Ûáõñ³ù³ÝãÛáõñÇó 100-³Ï³Ý qñ, ßáÏáÉ³¹» ÏáÝý»ïÝ»ñ`<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ 200qñ., Ñ³Ýù³ÛÇÝ çáõñ 4ÑáqáõÝ 1ßÇß 1É<br>ï³ñáÕáõÃÛ³Ùµ, q³½³íáñí³Í ÉÇÙáÝ³¹ 4ÑáqáõÝ 1ßÇß 1É ï³ñáÕáõÃÛ³Ùµ ¨<br>µÝ³Ï³Ý ÑÛáõÃ»ñ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1ïáõ÷ 200ÙÉ. ï³ñáÕáõÃÛ³Ùµ, Ñ³ó<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï µáùáÝÇÏ, Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1É³í³ß: àõÝ»Ýù Ý³¨<br>ïÝ³ÛÇÝ ËÝ³ÙùÇ ß³Ñ³éáõÝ»ñ, áñáÝó Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í ëÝáõÝ¹Á<br>ï³ñíáõÙ ¿ ïáõÝ: :Ծահող կազմակերպության կողմից տրամադրված<br>տրանսպորտային միջոցով /մարդատար ավտոմեքենա՝վարորդով 4-5<br>տեղանոց | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | *I V եռամսյակ մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ* |
| 20 | 79951110/346 | **Հաշմանդամների միջազգային օր**<br>01.12.2019**թ**.<br>Կազմակերպել միջոցառում վարչական շրջանի հաշմանդամ երեխաներ ունեցող սոցիալապես անապահով 40 ընտանիքների համար:/Միջոցառման վայրը հատուկ հարմարեցված լինի հաշմանդամ երեխաների տեղաշարժման անցկացման համար: Միջոցառման մասնակիցներին հատուկ հաշմանդամներին տեղափոխող տրանսպորտի միջոցով /միկրոավտոբուս/տեղափոխել միջոցառման վայր և ավարտից հետո տեղափոխել իրենց բնակության վայրերը: Միջոցառման տևողությունը 1ուկեսից-2ժամ մշակութային մասով օգտագործվի ձայնային տեխնիկա լինի կենդանի կատարումներ, խաղավարներ, մուլտֆիլմի հերոսներ և ծաղրածուներ: Միջոցառման ընթացքում լինի հյուրասիրություն քաղցրավենիք և բնական հյութեր: Հաշմանդամ երեխաներին տրամադրել նվերներ ըստ տարիքային համապատասխանության և ըստ | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | I V եռամսյակ մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հաշմանդամության ունակությունների/գրենական պիտույքներ հավաքածու՝ գունավոր մատիտներ, նկարչական ալբոմներ գունավոր կավիճներ, ջրաներկ, ծեփամածուկ,և ուսցողական խաղերի հավաքածուներ: /նախապես խորհրդակցելով բաժնի աշխատակիցների հետ /<br>ֆետների տուփեր /մեծ/: | | | | | | |
| 21 | 79951110/347 | **Ամանոր**<br>27.12.2019թ.<br>êáóÇ³É³ å»ë ³Ý³ å³Ñáí Ùá ï 110 ß³Ñ³éáõÝ»ñÇ Ñ³Ù³ñ Ñ̂áõñ³ ëÇñáõÃÛ³Ý<br>Ï³½Ù³ Ï»ñåáõÙ í³ñã³Ï³Ý ßñç³ÝáõÙ qáñÍáÕ µ³ñ»qáñÍ³Ï³Ý ×³ß³ñ³ÝáõÙ:<br>Ö³ß³ëñ³ÑÁ å»ïù¿ ½³ñ¹³ñíÇ ²Ù³ÝáñÇÝ ¨ êáõñµ ÌÝÝ¹Û³Ý ïáÝÇÝ<br>Ñ³Ù³å³ï³ëË³Ý: îáÝ³Ï³Ý Ó¨³íáñÙ³Ý Ñ³Ù³ñ ûqï³qáñÍíáõÙ »Ý<br>ïÝï»ë³Ï³Ý ³åñ³ÝùÝ»ñ, ÷³ÛÉ»ñ, ÷áõãÇÏÝ»ñ, ³ñÑ»ëï³Ï³Ý ÷³ÃÇÉÝ»ñ,<br>qáõÝ³íáñ Å³å³í»ÝÝ»ñ, ïáÝ³Ï³Ý ÙáÙ»ñ, ³ñÑ»ëï³Ï³Ý ïáÝ³Í³é<br>½³ñ¹³ñí³Í Ë³Õ³ÉÇùÝ»ñáí: îáÝ³Ï³Ý ×³ßÏ»ñáõÛÃÇ Å³Ù³Ý³Ï<br>ûqï³qáñÍíáõÙ »Ý Ù»Ï³Ýq³ÙÛ³ ûqï³qáñÍÙ³Ý ï³ñµ»ñã³÷ë»ñÇ ³÷ë»Ý»ñ,<br>µ³Å³ÏÝ»ñ ¨ ëÝÝ¹Ç Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í Ù»Ï³Ýq³ÙÛ³ ûqï³qáñÍÙ³Ý<br>åáÉÇ¿ÃÇÉ»Ý³ÛÇÝ ïáåñ³ÏÝ»ñ: Ø³ïáõóíáõÙ¿ ï³í³ñÇ ÙëÇó Ë³ßÉ³Ù³`<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ 200qñ. ùÛáõýÃ³` Ûáõñ³ù³ÝãÛáõñ ß³Ñ³éáõÇÝ`<br>200qñ. Ï³ñ³qáí Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ` 50qñ. , Ñ³×³ñÇ ÷É³í Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ<br>300qñ. å³ïñ³ëïí³Í ëáË»é³Íáí //5Ïq ëáË 5É. Ó»Ã/: ê»Õ³ÝÝ»ñÁ<br>Ó¨³íáñíáõÙ »Ý 2 qáõÛÝÇ ë÷éáóÝ»ñáí, ³ñÑ»ëï³Ï³Ý ïáÝ³Í³éÇ ×ÛáõÕ»ñáí ¨<br>÷áùñ Ë³Õ³ÉÇùáí ïáÝ³Ï³Ý½³ñ¹³ñí³Í áëÏ»qáõÛÝ ÙáÙ»ñáí 20 հատ 17հց<br>20սմ/ : ê»Õ³ÝÝ»ñÇÝ ¹ñíáõÙ¿ q»Õ»óÇÏ Ó¨³íáñí³Í qÇÝáõ ßß»ñ, 4 ÑáõqáõÝ 1ßÇß<br>750ÙÉ ï³ñáÕáõÃÛ³Ùµ /կիսաքաղցր տեղական արտադրության /., å³ÝÇñ<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ` 50q, , Ùñq»Õ»Ý /ËÝÓáñ, µ³Ý³Ý, Ý³ñÇÝç/` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ<br>1-³Ï³Ý Ñ³ï, ËÙáñ»Õ»Ý ³é³Ýó Ïñ»ÙÇ /3ï»ë³ÏÇ/ Ûáõñ³ù³ÝãÛáõñÇó 100-<br>³Ï³Ý qñ., ßáÏáÉ³¹» ÏáÝý»ïÝ»ñ` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 200qñ., Ñ³Ýù³ÛÇÝ çáõñ<br>4ÑáõqáõÝ 1ßÇß /1É ï³ñáÕáõÃÛ³Ùµ/, , q³½³íáñí³Í ÉÇÙáÝ³¹ 4ÑáõqáõÝ 1ßÇß /1É<br>ï³ñáÕáõÃÛ³Ùµ/ ¨ µÝ³Ï³Ý ÑÛáõÃ»ñ` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 200ÙÉ 1 ïáõ÷, Ñ³ó`<br>Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï µáùáÝÇÏ, 1 Ñ³ï, É³í³ß` Ûáõñ³ù³ÝãÛáõñÇÝ 1Ñ³ï:<br>àõÝ»Ýù Ý³¨ ïÝ³ÛÇÝ ËÝ³ÙùÇ ß³Ñ³éáõÝ»ñ, áñáÝó Ñ³Ù³ñ Ý³Ë³ï»ëí³Í<br>ëÝáõÝ¹Á ï³ñíáõÙ¿ ïáõÝ: Ծահող կազմակերպության կողմից տրամադրված<br>տրանսպորտային միջոցով /մարդատար ավտոմեքենա՝ վարորդով 4-5<br>տեղանոց/ ØÇçáó³éáõÙÁ áõÕ»Ïóíáõ٠¿ 30-40 ñáå» ï¨áÕáõÃÛ³Ùµ<br>Ùß³ÏáõÃ³ÛÇÝ Ù³ëáí: Ü»ñÏ³ ¿ÉÇÝáõÙ ÒÙ»é å³åÝ áõ ÒÛáõÝ³ÝáõßÇÏÁ:<br>ØÇçáó³éÙ³Ý Ùß³ÏáõÃ³ÛÇÝ Ù³ëÁ ÏÏ³½Ù³Ï»ñå»É ²Ù³ÝáñÇÝ ïáÝÇÝ<br>Ñ³Ù³ÑáõÝã: ä»ïù¿ ÏÇñ³éíÇ Ó³ÛÝ³ÛÇÝ ï»ËÝÇÏ³: | դրամ | | | 1 | Աջափնյակ վարչական շրջան | |
| ***Արաբկիր վարչական շրջան*** | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *22* | 79951110/349 | Արաբկիրի <<Սուրբ Խաչ>> եկեղեցու բակում տեղի կունենա Սբ. Զատիկին նվիրված միջոցառում: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է 50 հատ թխվածքաբլիթ` կուլիչ, 10սմ բարձրությամբ և 10սմ տրամագծով, փաթեթավորված` սննդի համար նախատեսված թափանցիկ թաղանթով և ժապավենով, հատուկ պիտակով, վրան գրված` Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, 50կգ գաթա /փաթեթավորված մեկական, սննդի համար նախատեսված թափանցիկ թաղանթով, զատիկի հավկիթ 300 հատ /ներկված` սննդի համար նախատեսված կարմիր գույնով/, հայկական արտադրության գինի, 1լ տարողությամբ, քանակը` 4 հատ, բնական հյութեր /12 հատ, 1 լ տարողությամբ/, մեկանգամյա օգտագործման բաժակներ /100 հատ փոքր/ 2սմ երկարությամբ և 2սմ տրամագծով և 50 հատ մեծ 7սմ երկարությամբ և 6սմ տրամագծով :<br>Կազմակերպվելու է համերգային ծրագիր, որը պետք է ապահովել ձայնային տեխնիկայով /3 Կվտ hq./ և խոսափողներով, իրենց կատարումներով հանդես կգան  երգիչ-երգչուհիներ /առնվազն` 3-4 երգ/, և ոչ պակաս քան 10 տարվա բեմական փորձ ունեցող ազգագրական երգ ու պարի համույթներ /2 համույթ, 10-12 անձ, առնվազն` 3-4 կատարում, պարային 1 խումբ /2-3 կատարում/:<br>Միջոցառումը կվարի հաղորդավարը, իսկ երաժշտական մասը կապահովի հնչյունային օպերատորը:<br>Միջոցառմանը հանդես կգան լարախաղացներ: | *դրամ* | | | *1* | Արաբկիր վարչական շրջան | նախընտրելի ժամկետ է համարվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց` 21.04.2019 |
| *23* | 79951110/350 | Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառում: Անհրաժեշտ է բնական ծաղիկներով մեկ ծաղկեպսակ, որÁ å ³ ïñ ³ ëï í ³ Í կÉÇÝÇ »éá ï ³ ÝÇ á ï ù»ñÇ íñ ³ ³ Ùñ ³ ó í ³ Í ûÕ ³ ÏÝ»ñá í: úÕ ³ ÏÝ»ñÇÝ ³ Ùñ ³ ó í ³ Í µÇáýÉáñÝ»ñ, áñáÝù å ³ ï í ³ Í ÉÇÝ»Ý Í ³ ÕÇÏÝ»ñá í ¨ Ï ³ Ý ³ ãáí: Ì ³ ÕÏ»åë ³ ÏÇ ïñ ³ Ù ³ ·ÇÍÁ áã å ³ Ï ³ ë 100ëÙ-Çó, áñÇ å ³ ïñ ³ ëïÙ ³ Ý Ñ ³ Ù ³ ñ å» ïù ¿ û· ï ³ ·áñÍ íÇ 30 ·»ñµ»ñ ³ , 40 í ³ ñ¹»ñ, 50 éáõëÏáõë, 2 Ï ³ å ùñÇ½ ³ ÝÃ»Ù: | *դրամ* | | | *1* | Արաբկիր վարչական շրջան | նախընտրելիժամկետ է համարվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց` 24.04.2019 |
| | | **Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 2019թ կարիքների համար մշակության միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում** | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 79951110/383 | **Զատիկ**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է Դավթաշեն վարչական շրջանում Սուրբ Զատկի /Հարության/ տոնին նվիրված միջոցառման անցկացումը` մոտ 200 բնակիչների համար: Միջոցառմանը մասնակցելու համար հրավիրել 1-2 երգի-պարի համույթներ, 1-2 անհատ կատարողներ /թեմատիկ երաժշտական կատարումներով/: Միջոցառման համար ապահովել բարձրորակ հնչյունային տեխնիկա 5-6 կվատ հզորությամբ, միջոցառման տևողությունը 60ր, համապատասխան ձևավորում, յուրաքանչյուր բնակչի տրամադրելու համար սննդի փաթեթ (նախատեսվում է հավկիթ – 4 հատ ներկած ԵԹՖ կամ համարժեքը, լավաշ` 2 հատ, թարմ` 1-ին կարգի ալյուրից, տեղական արտադրության կամ համարժեք,<br>գինի – 1 շիշ, կարմիր, կիսաչոր,շշալցումը` գործարանային, 0.75լ տարողությամբ, տեղական արտադրության կամ համարժք,<br>թարխուն` 2 կապ:<br>Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 21.04.2019թ |
| 25 | 79951110/384 | **Մայրության և գեղեցկության օր**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է Դավթաշեն վարչական շրջանում ապրիլի 7-ին` մայրության և գեղեցկության օրվա առթիվ միջոցառման անցկացումը: Միջոցառումն իր մեջ ներառում է համերգային ծրագիր` մոտ 60 ր տևողությամբ, 1-2 էստրադային երգիչ-երգչուհիներ, հրավիրված կանանց և աղջիկների (թվով 100 անձի) համար 1-ական վարդ և թեմատիկ ձևավորման ապահովում: Կենդանի արձան մարմնավորող կերպարի մասնակցություն` ծաղիկներ նվիրելու նպատակով: Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 07.04.2019թ-ից մինչև 20,04,2019թ |
| 26 | 79951110/385 | 1915**թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր** - Ծառայություն մատուցող կազմակերպությունը Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառման շրջանակներում ապահովում է 3 ծաղկեպսակ / ժապավենի վրա <<Դավթաշեն վարչական շրջան>> նշումով, գերբերա ծաղիկներով/, 150 հատ սպիտակ մեխակ, 40-50 տեղանոց 1 տրանսպորտային միջոց` աշխատողներին Ծիծեռնակաբերդ տանելու և հետ բերելու համար:<br>Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 24.04.2019թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 27 | 79951110/386 | **Հաղթանակի տոնակատարություններ**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է տոնական միջոցառում, համերգային ծրագիր`մոտ 60ր տևողությամբ,2-3 երգիչ-երգչուհիների, 1-2 պարային խմբերի մասնակցությամբ ` Դավթաշենի կենտրոնական այգում: Միջոցառման շրջանակներում անհրաժեշտ է 3 ծաղկեպսակ / ժապավենի վրա Դավթաշեն վարչական շրջան նշումով, մեխակ, գերբերա ծաղիկներով/ Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքում ծաղկեդրում իրականացնելու նպատակով: Միջոցառման ընթացքում բացօթյա հնչողություն ապահովելու համար անհրաժեշտ է հնչյունային տեխնիկա 5-6 կվտ հզորությամբ: Միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 09.05.2019թ. |
| 28 | 79951110/387 | **Վերջին զանգ** - Նախատեսվում է կազմակերպել միջոցառում 6 դպրոցների բակում, միջոցառման ընթացքում Ս. Գևորգյանի անվան հ 189 ավագ դպրոցի բակում բացօթյա հնչողություն ապահովելու համար անհրաժեշտ է հնչյունային տեխնիկա 5-6 կվտ հզորությամբ: Միջոցառման ընթացքում Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարը և աշխատակազմի համապատասխան աշխատակիցները Դավթաշեն վարչական շրջանում գործող 6 դպրոցներին շնորհավորական ուղերձներ են հանձնում: Շրջանավարտների շնորհավորելու համար անհրաժեշտ է ապահովել շնորհավորական ուղերձներ /6 հատ, A4 ֆորմատի բարձրորակ թղթից, 0.5մմ. հաստության/ և 30 հատ ծաղկեփունջ` դպրոցների տնօրեններին և ավարտական դասարանների դասղեկներին նվիրելու համար/ բնական, թարմ վարդերով փաթեթավորված/: Ուղերձի տեքստը, միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 2019թ. մայիսի վերջին շաբաթ |
| 29 | 79951110/388 | **Երեխաների պաշտպանության միջազգային օր**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ միջոցառման անցկացում: Միջոցառման շրջանակներում կազմակերպությունն ապահովվում է հնչյունային տեխնիկա 5-6 կվատ հզորությամբ՝ բացօթյա հնչողություն ապահովելու համար մոտ 60ր տևողությամբ: Երեխաներին զվարճացնելու համար անհրաժեշտ են համերգային ծրագիր, 2-3 հեքիաթի հերոս` իրենց երաժշտական ծրագրով, գունավոր փուչիկներ: Միջոցառման ընթացքում վարչական շրջանի երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է պատրաստել նվերների փաթեթ /500 հատ գունավոր մատիտներ, կավիճներ, 1 հատ նկարչական ալբոմ, 1 հատ <<ներկիր ինքդ>>/: Միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 01.06.2019թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 79951110/389 | **Խաղողօրհնության օր**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է Դավթաշեն վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում Խաղողօրհնության տոնի անցկացում՝ մոտ 200 բնակչի համար: Միջոցառումը կազմակերպելու համար կազմակերպությունն ապահովում է հնչյունային տեխնիկա 5-6 կվատ հզորությամբ, տևողությունը մոտ 60ր: Խաղողի ձեռքբերում և հյուրասիրություն /200 կգ քանակությամբ սեղանի սպիտակ, թարմ, քաղցր խաղող և 200 կգ սև մուսկաթ տեսակի խաղող, ընդամենը 400 կգ/: Միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:Ծառայությունը կմատուցվի պաշտոնապես հայտարարված օրը: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 16.08.2019թ. (փոփոխվում է) |
| 31 | 79951110/390 | **Բակային ժամանցային միջոցառումներ**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է համերգային ծրագրեր՝2-3 անհատ կատարողների, 2-3 հեքիաթի հերոսների մասնակցությամբ, բարձր որակի հնչունային տեխնիկա 5-6 կվատ հզորությամբ /տեղադրումով/,միջոցառման տևողությունը 60 րոպե: Ինչպես նաև նմանատիպ փոքր միջոցառումներ անցկացվում է վարչական շրջանի 4 բակային տարածքներում, որի տևողությունը 60 ր: Միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ՝ վերջինիս ներկայացված ժամանակացույցին համապատասխան: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 01.06.2019թ.-ից մինչև 31.09.2019թ. |
| 32 | 79951110/391 | **Գիտելիքի օր**-Նախատեսվում է կազմակերպել միջոցառում 6 դպրոցների բակում, միջոցառման ընթացքում Ս. Գևորգյանի անվան հ 189 ավագ դպրոցի բակում բացօթյա հնչողություն ապահովելու համար անհրաժեշտ է հնչյունային տեխնիկա 5-6 կվատ հզորությամբ: Միջոցառմանը Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարը և աշխատակազմի համապատասխան աշխատակիցները 6 դպրոցներին շնորհավորական ուղերձ են հղում: Ծառայություն մատուցող կազմակերպությունը Գիտելիքի օրվան նվիրված միջոցառման նպատակով Դավթաշեն վարչական շրջանում գործող 6 դպրոցներին շնորհավորելու համար ապահովում է շնորհավորական ուղերձներ /6 հատ, A4 ֆորմատի բարձրորակ թղթից, 0.5մմ. հաստության/: Ուղերձի տեքստը, միջոցառման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 01.09.2019թ |
| 33 | 79951110/392 | **ՀՀ անկախության օր**-Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է տոնական միջոցառման անցկացում՝ համապատասխան ձևավորմամբ /200 հատ փուչիկ/: Միջոցառման շրջանակում իրականացվում է համերգային ծրագիր 60-90ր տևողությամբ (համաձայնեցված պատվիրատուի ծրագրի հետ)՝ 2-3 ճանաչված երգիչների մասնակցությամբ, 4-5 պարային համարներով: Ծառայություն մատուցողը պետք է ապահովի հնչունային տեխնիկայի տեղադրումը և շահագործումը 5-6 կվատ հզորության: Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 21.09.2019թ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34 | 79951110/393 | **Ուսուցչի օր**-Ծառայություն մատուցող կազմակերպությունը Ուսուցչի օրվա միջոցառումը կազմակերպում է Դավթաշեն վարչական շրջան շենքի բակում, Դավթաշեն վարչական շրջանի կրթական և մշակութային հաստատությունների ուսուցիչներին միջոցառման շրջանակում շնորհավորելու համար ապահովում է ծաղկեփնջեր /համապատասխան քանակությամբ՝ 32 հատ, բնական, թարմ ծաղկեփնջեր՝ յուրաքանչյուր փնջում նվազագույնը 5 վարդ, համապատասխան փաթեթավորմամբ/: Առաքումը ապահովում է ծառայություններ մատուցող կազմակերպությունը։ Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 05.10.2019թ. |
| 35 | 79951110/394 | «**Էրեբունի-Երևան**» 2801- **ամյակի տոնակատարություն**- Ծառայություն մատուցող կազմակերպությունն ապահովում է պատվիրատուի կողմից ներկայացված ծրագրով տոնական միջոցառման իրականացում՝7-8 երգիչ-երգիչուհիների մասնակցությամբ, համապատասխան ձևավորում, հնչյունային տեխնիկայի տեղադրում և շահագործում 5-6 կվատ հզորության /համերգային տևողությունը 60-90ր/՝ բացօթյա հնչողություն ապահովելու համար: Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը, ինչպես նաև տրանսպորտի տեղակայումը և երթուղին համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ Ծառայությունը մատուցվում է պաշտոնապես հայտարարված օրը։ | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 10.10.2019թ. (փոփոխվում է) |
| 36 | 79951110/395 | **Ամանորյա միջոցառումներ**-Ծառայույթուն մատուցող կազմակերպությունն ապահովում է Ամանորյա միջոցառման կազմակերպումը՝ պատվիրատուի հետ համաձայնեցված ծրագրով: Ծրագիրը ներառում է ձայնային և հնչյունային տեխնիկայի օգտագործում 5-6 կվատ հզորությամբ, համապատասխան ձևավորմամբ: Պատվիրատուի կողմից ներկայացված ժամանակացույցին համապատասխան և նշված վայրերում (բակային տարածքներ) կազմակերպել տոնական միջոցառումներ՝ համերգային ծրագրերով՝ 1 Ձմեռ պապի,1 Ձյունանուշի, 7-8 երգիչների և 2-3 պարային խմբերի մասնակցությամբ, տևողությունը 60-90ր: Դավթաշեն վարչական շրջանի Եղնինի և փողոցները զարդարելու համար անհրաժեշտ են ամանորյա տոնական զարդարանքի պարագաներ՝ 100 ոսկեգույն, 100 արծաթագույն մեծ և փոքր խաղալիքներ՝ 300 հատ թարթող լույսեր գունավոր 60-80 մետր երկարության 150 հատ, ոսկեգույն ցանցատիպ ժապավեններ 30 հատ, շղթաներ՝ փայլուն, տարբեր գունային երանգներով 200 հատ: Անհրաժեշտ է նաև տրանսպորտային միջոց զարդարանքները պատշաճ իրականացնելու համար:Ապահովել Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ամանորյա հյուրասիրության կազմակերպում՝ շուրջ 100 անձի համար /ուտեստներ՝ խոզի խորոված, հավ ֆրիով, քյուֆթա փլավով, ձուկ աղցաններ՝ կեսար, հունական, սնկով, մայրաքաղաքային, պանիր, բաստուրմա, սուջուխ, ֆիլե՝ խոզ, խմիչքներ՝ կոնյակ Ախթամար /կամ համարժեք/՝ 10 հատ, գինի՝ Վերնաշեն/կամ համարժեք/՝ Արմենիա սպիտակ/կամ համարժեք/՝ 15 հատ օղի՝ ռուսական /Ռուսսկի ստանդարդ կամ համարժեք/ 10 հատ, շամպայն՝ հայկական կիսաչոր 15 հատ, ջրեղեն՝ բորժոմի/կամ համարժեք/՝ 35հատ, հանքային ջուր՝ 70 հատ, /բջնի, ջերմուկ կամ համարժեք/, ջուր՝ 35 հատ/նոյ կամ համարժեք/, բնական հյութեր, գազով հյութեր 140 հատ /կոլա,ֆանտա կամ համարժեք/, տորթ՝ 15կգ. մարցիպանով Դավթաշեն վարչական շրջանի անունը կրող խորհրդանիշով, մրգեր՝ ընդհանուր 15կգ.՝անանաս, տանձ, խնձոր, կիվի, խաղող, նարինջ, մանդարին/: Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ | *դրամ* | | | 1 | ք. Երևան Դավթաշեն վարչական շենք | 15.12.2019թ.-ից մինչև 23.12.2019թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Դավթաշեն վարչական շրջան** | | | | | | | | |
| 37 | 79951100/70 | **Սուրբ Զատիկի տոնակատարությունը** - Գնման առարկա է հանդիսանում Սուրբ զատկի տոնին նվիրված միջոցառման կազմակերպման ծառայության ձեռք բերումը, որը տեղի կունենա ապրիլին Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում, որի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել 50 անապահով ընտանիքներին նվերներ տրամադրում /հավկիթ` 10 հատ տուփով «Լուսակերտ» կամ համարժեքը, լավաշ` 5 հատ փաթեթավորված, գինի 1 հատ կիսաքաղցր «Արենի» կամ համարժեքը, կուլիչ/:Միջոցառման անցկացման վայրը և ծրագիրը համաձայնեցնել պատվիրատուի հետ/21.04.2019թ./ | դրամ | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 21.04.2019թ. |
| 38 | 79951100/71 | **Մայրության և գեղեցկության տոն**- Գնման առարկա է հանդիսանում Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումը, որը տեղի կունենա Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի շենքի բակում՝ 70 տարեց անժառանգ կանանց և հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի նվերների տրամադրում՝ 1տաք զուգագուլպաներ, 1 զույգ հողաթափեր և 1 շալեր: Անհրաժեշտ է գեղեցիկ գունավոր թղթով և ժապավենով փաթեթավորել և հանձնել կանանց: /07.04.2019թ./ | դրամ | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 07.04.2019թ-ից մինչև 20,04,2019թ |
| 39 | 79951100/72 | **Աշխատավորների համերաշխության միջազգային օրվա** տոնը նշվելու է Վետերանների խորհրդում, միջոցառման ժամանակ 35 աշխատանքի վետերանների համար նվերների հանձնում /հյութի կամ սուրճի բաժակներ 6 հատանոց տուփով, փաթեթավորված գունավոր, փայլուն թղթով և ժապավեններով տրամադրում/: /01.05.2019թ/ | դրամ | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 01.05.2019թ |
| 40 | 79951100/73 | **Հաղթանակի եռատոնի տոնակատարությունների** իրականացվելու Դավթաշեն վարչական շրջանի բակում Առողջապահության, սոցիալական ապահովության և ծրագրերի բաժնի հետ համատեղ, որի շրջանակներում 55 Արցախյան պատերազմի զոհված ազատամարտիկների ընտանիքներին , Հայրենական պատերազմի մասնակից վետերանների և թիկունքի վետերանների ընտանիքներին նվերների հանձնում: Նվերները` գազօջախում ջեռուցման համար նախատեսված` ապակե հրակայուն ափսեներ: Փաթեթավորել գունավոր թղթերով և ժապավեններով: /09.05.2019թ/ | դրամ | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 09.05.2019թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | 79951100/74 | **«Ընտանիքի օր» միջոցառման ժամանակ** Առողջապահության, սոցիալական ապահովության և ծրագրերի բաժինը ունենալու է տնայցեր, ինպես նաև միջոցառումի կազակերպում Դավթաշեն վարչական շրջանի բակում և 20 նորաստեղծ ընտանիքների նվերների տրամադրում: Նվերները անհրաժեշտ է փաթեթավորել գունավոր փայլուն թղթերով, և յուրաքանչյուր փաթեթ պետք է պարունակի որակյալ 6 հատանոց տուփով ապակե ափսեներ և որակյալ 6 հատանոց տուփով ապակե բաժակներ:/15.05.2019թ/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 15.05.2019թ |
| 42 | 79951100/75 | **«Երեխաների պաշտպանության միջազգային օր» միջոցառմա**նը շրջանակներում 50 անապահով ընտանիքների երեխաների համար կինոդիտման կազմակերպում կինոթատրոնում: Անհրաժեշտ է ձեռքբերել տոմսեր:/ 01.06.2019թ/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 01.06.2019թ |
| 43 | 79951100/76 | **Գիտելիքի օր միջոցառման շրջանակներում** Դավթաշեն վարչական շրջանի բակում Առողջապահության, սոցիալական ապահովության և ծրագրերի բաժինը կապահովի գեղեցիկ միջոցառում, որի շրջանակում 30 անապահով, բազմազավակ, ծնողազուրկ, վարձով բնակվող ընտանիքների դպրոցահասակ երեխաներին նվերների տրամադրում: Անհրաժեշտ է յուրաքանչյուրի համար ձեռք բերել հագուստ՝ բամբակյա վերնաշապիկ սպիտակ գույնի և տաբատ, կիսաշրջազգեստ՝ չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Փաթեթավորել նկարազարդ գունավոր թղթերով և ժապավենով: /01.09.2019թ/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 01.09.2019թ |
| 44 | 79951100/77 | **ՀՀ Անկախության օր Դավթաշեն վարչական շրջանի բակում պետք է իրականացվի միջոցառում, որի շրջանակներում** 35 արցախյան պատերազմի հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին աջակցության ցուցաբերում/մեկ ընտանիքի փաթեթի պարունակությունը կազմում է 1 հատ բուսական յուղ, 1կգ շաքարավազ, 1կգ բրինձ, 1կգ ոսպ, 1կգ հնդկաձավար, 1 կգ մակարո: Անհրաժեշտ է այս ամենը փաթեթավորել եռագույնի գույներով պատկերված թղթերով և ժապավենով:/21.09.2019թ/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 21.09.2019թ |
| 45 | 79951100/78 | **ՈՒսուցչի օր տոնակատարության պետք է իրականացվի Վետերանների խորհրդում և դրա շրջանակում** 30 վետերան ուսուցիչների, բազմավաստակ ուսուցիչների, երաժշտական դպրոցի բազմավաստակ ուսուցիչներին նվերների հանձնում: Յուրաքանչյուրին նախատեսել 1հատ որակյալ սեղանի ծածկոց 120*90սմ, փաթեթավորված գունավոր թղթով և 1 հատ ծաղկեփունջ կազմված գերբերաներից, վարդերից և ծաղկային այլ հավելումներից: /05.10.2019թ/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 05.10.2019թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | 79951100/79 | **Տարեցների միջազգային օրվա** առթիվ 20 ցերեկային կենտրոնի շահառուների համար կազմակերպել տոնական միջոցառում ու հյուրասիրություն հացաբուլկեղենի, խնձոր,բանան, խաղող, կիվի, նարինջ, բնական կամ գազավորված հյութեր, կոնֆետ խմորեղեն: /01.10.2019**թ**/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 01.10.2019թ |
| 47 | 79951100/80 | **Հաշմանդամների միջազգային օր** միջոցառման շրջանակներում «Լույսի աստղ» ՀԿ-ի 60 շահառուների համար այցելություն ձիարշավարան՝ թերապիայի կազմակերպում : /03.12.2019**թ**/ | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 03.12.2019թ |
| 48 | 79951100/81 | **Սոցիալապես անապահով ընտանիքներին**, **հաշմանդամների**ն, Հայրենական պատերազմի վետերաններին և միայնակ տարեցներին միջոցառումները պետք է կազմակերպվի մշակութային կենտրոններ, թատրոններ այցելելով, որի համար անհրաժեշտ է տրանսպորտ ձեռք բերել մարդատար միկրոավտոբուս մինչև 15-տեղանոց 2010-2012թթ. արտադրության, օդափոխիչ համակարգով և նոր անվադողերով: Կատարողը պետք է ապահովի տրանսպորտային միջոցները վարելու իրավունք ունեցող վարորդներով: Մատուցվող կիլոմետրաժը պետք է լինի մինչև 100կմ: Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջով: | *դրամ* | | | 1 | Դավթաշեն վարչական շրջան | 25,12,2019թ |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՏԱՐՈՂ**

--------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ

-------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 79951110/326 | «Պարի միջազգային օր» Միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/327 | «Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/328 | «Հայաստանի առաջին հանրապետության օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/329 | «Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/330 | «Աջափնյակի օր» Համերգային միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/331 | «Ամառային բակային ճամբար» /1 բակ/ հուլիս-օգոստոս 2019թ.միջոցառումներ | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/332 | Քաղաքից դուրս գործող ճամբարներ մեկնելու և վերադարձի կազմակերպում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 79951110/333 | Գիտելիքի օր միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/334 | «ՀՀ Անկախության օր» Համերգային մշակութային միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/335 | ՈՒսուցչի օր» մշակութային միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/336 | «Գրադարանավարի օր» միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/337 | Մշակութային կազմակերպությունների տարեվերջյան ամփոփ միջոցառում 12.12.2019թ. | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/340 | «Սուրբ հարության օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/341 | Հաղթանակի օրվա միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/342 | «Ընտանիքի օր» մշակութային միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/343 | «Երեխաների պաշտպանության օր» միջոցառում | | | | 75 % | 75 % | 75 % | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/344 | էքսկուրսիաների կազմակերպում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/345 | «Խաղող օրհնեքի տոն» միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/346 | «Տարեցների օր» միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 79951110/347 | «Հաշմանդամների միջազգային օր» միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/348 | Ամանորի միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/349 | Արաբկիրի <<Սուրբ Խաչ>> եկեղեցու բակում տեղի կունենա Սբ. Զատիկին նվիրված միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/350 | Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/383 | Զատիկ միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/384 | «Մայրության և գեղեցկության օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/385 | «1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/386 | Հաղթանակի տոնակատարությունների միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/387 | Վերջին զանգի միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/388 | «Երեխաների պաշտպանության միջազգային օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/389 | «Խաղողօրհնության օր» միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/390 | Բակային ժամանցային միջոցառումներ | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 79951110/391 | «Գիտելիքի օր» միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/392 | «ՀՀ անկախության օր» մշակութային միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/393 | «Ուսուցչի օր» միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/394 | «Էրեբունի-Երևան» 2801- ամյակի տոնակատարությունի միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951110/395 | Ամանորյա միջոցառումներ | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/70 | «Սուրբ Զատիկ» տոնակատարության միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/71 | Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/72 | Աշխատավորների համերաշխության միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/73 | Հաղթանակի եռատոնի տոնակատարությունների միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/74 | «Ընտանիքի օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/75 | «Երեխաների պաշտպանության միջազգային օր» միջոցառում | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/76 | Գիտելիքի օր միջոցառման շրջանակներում նվիրված միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 79951100/77 | ՀՀ Անկախության օրվա միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/78 | ՈՒսուցչի օրվա տոնակատարության միջոցառում | | | | | | | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/79 | Տարեցների միջազգային օրվա միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/80 | «Հաշմանդամների միջազգային օր» միջոցառում | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |
| 79951100/81 | Սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամներին, Հայրենական պատերազմի վետերաններին և միայնակ տարեցներին մշակութային կենտրոններ, թատրոններ այցելելու միջոցառումներ | | | | | | | | | | 100% | 100% | 100% | 100% |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ________________ |
| հհ __________________________ | հհ_____________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ___________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
______________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «___________________» 20 թ.
Պայմանագրի համարը` ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »            20   թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20      թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն ազգանուն, անուն

ստորագրություն ստորագրություն

Հավելված 6
«---ԳՀԾՁԲ---/---»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԱՐՑՈՒՄ
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

_____________________________-ի կարիքների համար կազմակերպված ____________________________________________________
պատվիրատուի անվանումը ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20 ____ թվականի __________-ի N ______որոշմամբ 1-ին տեղ է զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցը (մասնակիցները)`

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել տեղեկատվություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի` նույն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

_________________ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար ______________________ ______________________
ընթացակարգի ծածկագիրը անունը, ազգանունը ստորագրություն

_____ ___________ 20 թ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

Հավելված 7
«---ԳՀԾՁԲ---/---»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին

| Ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանումը | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ | հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ | | | | հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավեկշռային արժեքը/ՀՀ դրամ | |
| | | | | | | | | | ակտիվներ | պարտավորություն |
| | | | | | 20..թ. | 20..թ. | 20..թ. | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

Տեղեկատվությունը տրվել է ______________________________ վարչության աշխատակից ________________________-ի կողմից ______________________
վարչության անվանումը | անունը, ազգանունը | ստորագրություն

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*Հավելված 8*
*«---ԳՀԾՁԲ---/---»*  ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
(**պայմանագրի կատարման ապահովում**)

ք. Երևան «______»__________________ 20 թ.**

_____________________________, ի դեմս Ընկերության տնօրեն ____________________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է _________________________________________* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ _________________________________________* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. **Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները`**

______________________________
ընկերության անվանումը

______________________________
ընկերության հասցեն

______________________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

______________________________
ընկերության բանկային հաշվեհամարը

______________________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

______________________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
** *լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[14]

2. Թիվ

3.Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)`

6. Վճարողի հաշվի համարը`

7. Վճարողի ՀՎՀՀ`

8. Վճարողի ՀԾՀ`

9. Շահառուի  անվանումը, կամ անուն ազգանուն ` Երևանի քաղաքապետարան

10.  Շահառուի  ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ`02593108

12.Շահառուին  սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)`

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)`

15. Ակցեպտավորված գումարը`  (թվերով և բառերով)  (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)`

17.Գործարքի (վճարման) նպատակը`  *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի  ծածկագիրը որի հիման վրա կատարվում է  գանձումը)`

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝    ---     էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/______________________/<br>/______________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա.  Վճարողի ստորագրությունները`<br>/______________________/<br>/______________________/<br>21.բ.  Կ.Տ. |

[14] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | |
|---|---|
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/_____________________/<br><br>/ստորագրություն/<br><br>24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/_____________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | **<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները** | **Նշված դաշտի / վավերապայմանի առկայությունը փաստաթղթում** | **Վավերապայմանի լրացման պահանջը** (**գնումների գործընթացի հետ կապված**) | **Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը** (**գնումների գործընթացի հետ կապված**) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Փաստաթղթի անվանումը | պարտադիր | պարտադիր | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր> |
| 2. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 3. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: |
| 4. | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 9. | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>(գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում) | (չի լրացվում) |
| 11. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) | պարտադիր | ոչ պարտադիր<br>(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում) | (չի լրացվում եւ չի կիրառվում) |
| 16. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 17. | գործարքի նպատակը | պարտադիր | Պարտադիր լրացվում է «պայմանագրի կատարման ապահովման համար» բառերը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 18. | Վճարման կատարման հիմքերը՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին լրացվում է պահանջագրի | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի, | |
| 19. | Վճարման պայմանները՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը,<br>որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար | նախապես լրացվում է շահառուի կողմից |
| 20. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին)<br>Եթ ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է: | լրացվում է շահառուի կողմից |
| 21.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը: | ստորագրվում է վճարողի կողմից կամ<br>դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը |
| 21.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով | կնքվում է վճարողի կողմից<br>թղթային եղանակով ներկայացնելիս |
| 22.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | Պարտադիր՝<br>լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 22.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից<br>թղթային եղանակով բանկ ներկայացնելիս |
| 23.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատակցի ստորագրությունը | | եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.գ | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր<br>վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |
| 24.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |